համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N15-1222-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N4 («Սիմոնյան»
կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային
մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միքոնյան

034/6758-15
06.03.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

2015 թվականի N Մ-
բաղ. Երևան

-Ա

3/6.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-1345-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Հայկական Կարիտաս»
բարեսիրական հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2015 թվականի փետրվարի 24-ի N 07/80-2/3849-15 և փետրվարի 20-ի
N 06/3-3/3652-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակեր-
պության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն
անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից
իրականացվող «Մարդասիրական աջակցություն սիրիահայ փախստականներին» ծրագրի
մասին» N Մ-1345-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունեն զգալի նշանակություն:

1) «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01842346) 2015 թվականի հունվարի 14-ին և
հունվարի 22 կնքված NN 171/HASAR-2/2014/04/01 ու 171/HASAR-2/2014/04/02 պայմանագրե-
րում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է սննդամթերքի ձեռքբերում՝
36,300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և սանիտարահիգիենիկ
պարագաների ձեռքբերում՝ 14,520,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2015 թվականի հունվարի 22-ին
կնքված 171/HASAR-2/2014/04/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
դեղորայքի, բժշկական պարագաների ձեռքբերում՝ 8,250,000 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:

3) «Էքսիս Ռիթեյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02603175) 2015 թվականի փետրվարի 5-ին
կնքված 171/HASAR-2/2014/04/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
հագուստի ձեռքբերում՝ 18,150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

3/6.12

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

24.02.15թ. № 07/80-2/3849-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 16.02.2015թ. N 15/15.4/2096-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1345-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայկական Կարիտաս»
բարեսիրական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ, հայտնում
ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

N 034/5523-15
24.02.15թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N 06/3-3/3652-15
20.02.15թ.

3/6.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 16.02.2015թ. N 15/15.4/2096-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1345-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայկական Կարիտաս»
բարեսիրական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի
վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոմյան

N 034/5144-15
20.02.15թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
— մարտի 2015 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա 3/6.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան
մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2015 թվականի փետրվարի 24-ի N 07/80-2/3930-15 և փետրվարի
23-ի N 06/3-3/3893-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակեր-
պության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվա-
կանի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին
հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ հաստատ-
ված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01569792) 2015 թվականի հունիսի 15-ին
կնքված N 01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է առաքելության
ծառայությունների մատուցում՝ 6,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



3/6.13

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

24.02.15 № 07/80-2/3930-

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 17.02.2015թ. N 15/15.4/2226-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առաքելություն Արևելք»
մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման
նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

N 034/5409-15
24.02.15թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N 06/3-3/3893-15
23.02.15p 3/6.13

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 17.02.2015թ. N15/15.4/2226-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ հաստատված
ծրագրին հարակից գործարքի մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական
օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի
վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Սիմոնյան

N 034/5370-15
23.02.15p

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
մարտի 2015 թվականի N Մ-
քաղ. Երևան -Ա

3/7.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1255-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-15 և փետրվարի
-ի N 06/5-1/-15 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Ամերիկայի Հայ
օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015
թվականին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1255-Ա որոշման մեջ կատարել հետևյալ
փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «102,759,368 դրամ» բառերը փոխարինել «114,800,738
դրամ» բառերով.


2) որոշման 2-րդ կետի 9-րդ ենթակետում «4,356,000 դրամ» բառերը փոխարինել
«4,896,000 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն:

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն *Ռ. Ն. Նիկոլյան*
29 դեկտեմբերի 2014թ.
Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից
2015 թ. իրականացվելիք սոցիալական

ԲԱՐԵԾԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՔԻՐ



1	Ծրագրի անմիջական նպատակը	Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապատում, լքված, կրթությունից և այլ համայնքի ծառայություններից դուրս մնացած, վարքային և ինքնուզական խնդիրներով, երեխաների համար «գնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում երկու ճանապարհով՝ 1) Ներկենտրոնային - Կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների կարգավորում և վերադարձ ընտանիք և/կամ վերադարձվելու 2) Արտակենտրոնային - «Թեժ գիծ» ծառայության կամ ռադիկալության ու այլ մարմինների կողմից ստացված ահազանգերի առնչությամբ սոցիալ-ինֆորմական աջակցության ծառայությունների տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես ցրանց ընտանիքում՝ կոմերետ համայնքում:
2	Ծրագրի բարեգործական որակն ու նպատակը	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում մատակարարվող մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրեմական պիտույքների, սանիտարատեխնիկական վարագույնի գնման, բնակարանային վերանորոգման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալյալում ենթ ԲԱՀ-ից ազատում:
3	Բարեգործը	Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ:
4	Ծրագրի կատարողը	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ, հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլենցու փողոց, թիվ 64, ՀՎՀՀ 01009295
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզերի բնագավառը՝ սոցիալական, ինֆորմական և սոցիալ-մանկավարժական աջակցություն
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 114,800,738.00 ՀՀ դրամ: Միջոցները ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից:
7	Բարեգործություն ստացողը	Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ թափառաշրջիկ, աղքատ, անապատվ, մոլորակ, անապատում, խնամազուրկ, լքված, բռնությունների գոյ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և ցրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և

3/2-1

		աջակցության կարիք ունեն և Կենտրոն են ուղարկվում ՀՀ Ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժնիների, համայնքային Խճանաչակության համահամագործակցության, կրթական հաստատությունների, պետական և հասարակական այլ տարբեր առյուծների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն): Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կապասարկվի մոտ 250 երեխա և առնվազն 200 ծնող: Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում կապասարկվի մոտ 1500 երեխա և ալելի բան 1000 ծնող/խնամող: Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաներ/ընտանիքները կստանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱՀՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները: Ավելացվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանան մինչև 3000 շահառուներ: 01.01.2015թ. - 31.12.2015թ.
8	Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	Մրգ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, ինֆորմական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Արտակենտրոնային, Խճանաչակության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի մեղքը և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-ինֆորմական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ ոչ այնքան վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի մեղքը գտնվողները Կենտրոնից աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում: Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավապահ բազմամասնագիտական զննատուն, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում: Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ Ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և Արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը	Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթ՝ խնամք (փոփոխ, սնունդ), սոցիալ ինֆորմական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացվող) բուժ. հաստատությունում), կրթական, մանագիտական կողմնորոշման աջակցություն, թերապիայի ծառայություններ՝ հարգանքներով բռնարարներ, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրաքանչյուր մոտեցումը երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի: Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխաներ/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերջ հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կատարվողները և ծառայություններին, որոնք առկա են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի

3/2-1

	քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված դժվարին իրավիճակը: Սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնողները 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հետախոսային կամ այցելությունների միջոցով: Երեխաները կենտրոն են ուղղորդվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանափակումների: Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, ամողի, հագուստի, առողջապահական, կրթական, օրվա գրադուցների կազմակերպման, շենքի պահպանության, կրմունայ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, արհմիութնային և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը: Ծրագրի ընդհանուր արժեքը 2015թ. համար կազմելու է 114,800,738.00 ՀՀ դրամ, որը ըստ նախատեսվածի բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին նամայակ՝ 28,700,184.5 ՀՀ դրամ, երկրորդ նամայակ՝ 28,700,184.5 ՀՀ դրամ, երրորդ նամայակ՝ 28,700,184.5 ՀՀ դրամ և չորրորդ նամայակ՝ 28,700,184.5 ՀՀ դրամ: Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների. 1. սնունդ 17,188,000.00 ՀՀ դրամ 2. բժշկական սպասարկում/դեղորայք/ և հագուստի ձեռքբերում 3,788,000.00 ՀՀ դրամ 3. կրմունայ և կապի ծախսեր 11,500,000.00 ՀՀ դրամ 4. շինությունների սպասարկում 1,170,370.00 ՀՀ դրամ 5. հաշվապահական և առդիտարական ծառայություն 5,396,000.00 ՀՀ դրամ 6. շահառուների սպասարկման անհրաժեշտ տրամադրուային ծախսեր՝ 4,900,000.00 ՀՀ դրամ 7. գրասենյակային պիտույքներ 400,000.00 ՀՀ դրամ 8. սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) 55,370,000.00 ՀՀ դրամ, 9. Վարչական աշխատակազմի ծախսեր՝ 3,100,000.00 ՀՀ դրամ 10. Մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման ծախսեր 4,010,000.00 ՀՀ դրամ 11. ՀՀ Ոստիկանություն կողմից իրականացվող ծառայություն՝ 7 978 368 ՀՀ դրամ: Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար: Այվկալում ենք 2015թ. հունվարի 01-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝ 1. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հյուսիս» մասնաճյուղ, ք. Երևան, Քոչար 13ա, ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 222226, կնքված 06.08.2008թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 3 500 000 ՀՀ դրամ 2. «Հայտուսագապար» ՓԲԸ, ք. Երևան, Չարենցի 14/ա, ՀՎՀՀ 00046317, 07.07.2013թ կնքված Պայմանագիր N 013.08.13.0948, Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 5 000 000 ՀՀ դրամ
--	--

	3. «Երևան ցուր» ՓԲԸ ք. Երևան, Արուսյան 66ա, ՀՎՀՀ 01555351, Պայմանագիր՝ կնքված 01.04.2009թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 000 000 ՀՀ դրամ 4. «Արմենիա Տելեֆոն Կոմյանի» ՓԲԸ, ք. Երևան, Անաբոյան 2, ՀՎՀՀ 02500052, երկրորդանի Պայմանագիր, Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 500 000 ՀՀ դրամ 5. «Աշտարակ - Կաթ» ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գյուղ Ագարակ, ՀՎՀՀ 05001995, Պայմանագիր՝ կնքված է 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ 6. «Դավիթ 84» ՓԲԸ, ք. Երևան, Դրոյի 22/1, ՀՎՀՀ 00833046, Պայմանագիր՝ կնքված 26.11.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 300 000 ՀՀ դրամ 7. «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ, ք. Երևան, Մուսիսի 31, ՀՎՀՀ 02226764, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ 8. «Տեխնոքեն Ինտերմիշնլ» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 278, ՀՎՀՀ 01529519, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 1 000 000 ՀՀ դրամ 9. «Փրայատաբերիտուս Կուսիտ» Սենթրալ Այժա ընդ Կոկասի Բի ՎԻ» ընկերության հայաստանյան մասնաճյուղ ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, թիվ 17 ՀՎՀՀ 02586628, Հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ-համաձայնագիր թիվ 50100215, կնքված 25.11.2014թ. և վերջինիս հավելված 1, առ 29.12.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 4 896 000 ՀՀ դրամ 10. «Էլվիսի քոմպոսից ընդ աուդիո» ՍՊԸ, ք. Երևան, Նուբարաշեն 10Գ., տ.6, ՏԳՀ՝ ք. Երևան, Մյասնիկյան պող. 5/1, ՀՎՀՀ 00433357, Պայմանագիր N 37, կնքված 10.11.2014թ., Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ
--	--

	11. «Էյ-Ի-Ջի-Մերվա», ք.Երևան, Արմենի-10, ՀՀՀՀՀ 00930884, 09.04.2010թ. Պայմանագիր N Ե-1118, Համաձայնագիր N 3/Ե-1118, 10.04.2013թ. և Համաձայնագիր N 5/Ե-1118, 10.11.2014թ. 12. ՀՀ Ոստիկանություն, ք.Երևան, Նալբանդյան 130, ՀՀՀՀՀ 01533334, 08.01.09թ. կնքված Պայմանագիր N 01/09 և կից Համաձայնագրեր՝ կնքված 01.03.2010թ. և 06.11.2014թ. Պայմանագիր գինը՝ 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 7 978 368 ՀՀ դրամ: 13. «Ալբեր Գրեյ» ՍՊԸ, ք.Երևան, Տիգրանյան 3-րդ նրբ., 2/2, ՀՀՀՀՀ 01842346, Պայմանագիր՝ կնքված 14.10.2011թ. և Համաձայնագիր՝ 11.10.2013թ. Պայմանագիր գինը՝ 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 5 000 000 ՀՀ դրամ 14. «Յուքոն» ՍՊԸ, ք.Երևան, Մայաք-Նովա 40/1, ՀՀՀՀՀ 00024873, Պայմանագիր N 023/27/112012՝ կնքված 27.11.2012թ. Պայմանագիր գինը՝ 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 1 500 000 ՀՀ դրամ 15. «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, ք.Երևան, Համրապետության 62/133, ՀՀՀՀՀ 00861057, Պայմանագիր՝ կնքված 10.10.2013թ. Պայմանագիր գինը՝ 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 400 000 ՀՀ դրամ
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 21,566,370.00 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժեքության 18.79 %-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են կոմունալ և կապի ծառայությունների, շինությունների սպասարկման, հաշվապահական և աուդիտորական ծառայությունների, գրասենյակային սխեմայի և վարչակազմի աշխատավարձի համար նախատեսված ծախսերը:
12	Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/կազմակերպությունների հետ
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը

3/2.1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

3/2.1

0010, Երևան, Մեղիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

17.02.15 № 04/80-2/ 3200-15
Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
Նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.02.2015թ. N 15/15.1/1678-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1255-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ») որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր դիտարկմամբ ծրագրի 9-րդ կետի 5-րդ ենթակետում հաշվապահական և աուդիտորական ծառայությունների համար նախատեսված 5,396,000.00 դրամ գումարը և ծրագրի 10-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում նախատեսված գործարքներն ըստ էության համարվում են կազմակերպական ծախսեր: Ուստի առաջարկում ենք վերահաշվարկել և վերահամբարել ամբողջ ծրագրի բյուջեն:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/4547-15

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-549



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/2955-15
13.02.15 3/1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.02.2015թ. N15/15.1/1678-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N15-1255-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի և «ՓրայստոթերիաուսԿուպերս Սենտրալ Այժա ընդ Կոկասիս Բի.Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջև 24.11.2014թ. կնքված N 50100215 պայմանագրով նախատեսված գործարքը 12.12.2014թ. N15-1255-Ա որոշմամբ արդեն իսկ ճանաչվել է հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրին հարակից գործարք:

Հետևաբար, հիմք ընդունելով վերը նշված պայմանագրին կից 2014 թվականի դեկտեմբերի 29-ին կողմերի միջև կնքված համաձայնագիրը, առաջարկում ենք որոշման նախագծի 2-րդ կետով փոփոխություն կատարել 12.12.2014թ. N15-1255-Ա որոշման 2-րդ կետի 9)-րդ ենթակետում՝ «4.356.000» թիվը փոխարինելով «4.896.000» թվով:

Հարգանքով՝

Վ.Միրոնյան

ԳՄՀՄ քաժին, Ն.Քեմակյան
011-800-329

034/4293-15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N15-1255-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Հիմնավորում	Դիտության կամ առաջարկության բովանդակությունը
Հիմնավորում 17.02.15, N 07/80-2/3200-15	ՀՀ ֆինանսների նախարարություն – 17.02.15, N 07/80-2/3200-15
Առաջարկությունը ընդունվել է: Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը	Մեր դիտարկման ծրագրի 9-րդ կետի 5-րդ ենթակետում հաշվառված և աուդիտորական ծառայությունների համար նախատեսված 5,396,000.00 դրամ գումարը և ծրագրի 10-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում նախատեսված գործարքները ըստ էության համարվում են կազմակերպական ծախսեր: Ուստի առաջարկում ենք վերահաշվարկել և վերախմբագրել ամբողջ ծրագրի քրոջեն
ՀՀ ֆինանսների նախարարություն – 13.02.15, N 07/80-2/2955-15	ՀՀ ֆինանսների նախարարություն – 13.02.15, N 07/80-2/2955-15
Առաջարկությունը ընդունվել է: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը	Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի և «ՓրայստոթերիաուսԿուպերս Սենտրալ Այժա ընդ Կոկասիս Բի.Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջև 24.11.2014թ. կնքված N 50100215 պայմանագրով նախատեսված գործարքը 12.12.2014թ. N15-1255-Ա որոշմամբ արդեն իսկ ճանաչվել է հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրին հարակից գործարք: Հետևաբար, հիմք ընդունելով վերը նշված պայմանագրին կից 2014 թվականի դեկտեմբերի 29-ին կողմերի միջև կնքված համաձայնագիրը, առաջարկում ենք որոշման նախագծի 2-րդ կետով փոփոխություն կատարել 12.12.2014թ. N15-1255-Ա որոշման 2-րդ կետի 9)-րդ ենթակետում՝ «4.356.000» թիվը փոխարինելով «4.896.000» թվով

3/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

_____ փետրվարի 2015 թվականի N Մ-
բաղ. երևան

-Ա

3/7.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1026-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԱՐ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի -ի N -15 և փետրվարի -ի N եզրակացությունները և հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2015 թվականի փետրվարի 19-ի N 92 գրությունը, որոշում է:


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագրի մասին» N Մ-1026-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի «238,808,517 դրամ» բառերը փոխարինել «139,383,676 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԻՐ



Հայաստանի Հանրապետության
Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր տնօրեն
19.02.2015թ.

«Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Դեղորայքի ընդունման հետևողականության բարելավումը նույնիսկ սուբերկուլոզով (այսուհետ՝ SF) հիվանդների բուժման արդյունավետության բարձրացմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	ՀՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլխավոր հիմնադրամ, Ժնև, Շվեյցարիա
4.	Ծրագրի կառավարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարսկյան 21, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ ողջ տարածքով, հանրային առողջապահական ոլորտ
6.	Ծրագրի բյուջեն	139 383 676 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ բոլոր մարզերի SF հիվանդներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2015թ հունվարի 12-ից մինչև 2015թ հունիսի 30-ը

3/7.2

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անդամշուտ ֆինանսական միջոցների ծավալը



Ծրագրի շրջանակներում ըստ ուղղությունների, սեփականված են հետևյալ հիմնական գործողությունները՝

1. Սոցիալական աշխատողների կողմից իրականացվող կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ
Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2015թ հունվարի 12-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ամիսը չորս անգամ 40 սոցիալական աշխատողների կողմից կիրականացվեն կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ ամբողջատոր բուժման փուլում գտնվող ռեզուլյար SF և ՂԿ-SF հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար հանրապետության ողջ տարածքում:

Աշխատանքները ներառում են՝

1.1 Սոցիալական աշխատողների այցելություններ հիվանդների տուն՝ նրանց կենցաղային պայմաններին ծանոթանալու, հիվանդների ու նրանց ընտանիքի անդամներին SF հիվանդության վերաբերյալ ուսուցանելու, SF-ն լուսաբանող տեղեկատվական նյութերի հասկացման նպատակով՝ տվյալ հիվանդի բուժման ընթացքում արևելազն մեկ անգամ:
Աշխատանքների արշայունքում ընտանիքի անդամները կճանաչեն SF-ից պաշտպանման միջոցներին, հիվանդի նկատմամբ ցուցաբերվող վարքին և հիվանդի նկատմամբ խարանի վերացումը:

Սոցիալական աշխատողները ապահովվելու են անհատականից միջոցներով ձեռքերի մշակման թաց անձեռոցիկներ, ամիրտային գլոխիկներ, անհատականից գլեղեր:

Բյուջեն՝ 12 143 352 ՀՀ դրամ

3/7.2

1.2 Բուժման հետևողականության բարձրացման նպատակով SF հիվանդների համար կրթական միջոցառումների կազմակերպումը,



կիրականացվի սոցիալական աշխատողների կողմից՝ հավասարը հավասարին սկզբունքով: Դասընթացների կիրականացվեն այն SF կարիներներում, որտեղ հիվանդները ստանում են իրենց ամբողջատոր բուժման փուլը: Ցուրաբանչյուր եռամսյակ կիրականացվի 1.5 ժամ տևողությամբ 12 դասընթաց, կամ ընդհանուր առմամբ 48 դասընթաց 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ. հունիսն ընկած ժամանակահատվածում:

Ցուրաբանչյուր խումբ բաղկացած կլինի արավելագույնը 10 հիվանդից: Մասնակիցները կապահովվեն թեթև սննդով և գրենական պիտույքներով:

Բյուջեն՝ 600 000 ՀՀ դրամ

3. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով SF հիվանդներին սննդային փաթեթների բաշխում /քրեակատարողական հիմնարկներում/

Սոցիալական աջակցություն կտրամադրվի քրեակատարողական հիմնարկներում գտնվող բոլոր SF հիվանդներին (արավելագույնը՝ 40 հիվանդ յուրաքանչյուր շաբաթ):

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր SF հիվանդները ծրագրի իրականացման ընթացքում, 2015թ հունվարի 12-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, շաբաթական մեկ անգամ կստանան սննդային փաթեթներ հետևյալ բաղադրությամբ՝

- 1) Պաճածոյացված միս - արևելազն 400գ
- 2) Թթվախնեղ և կաթնաշոռ - արևելազն 300գ (10 % յուրաքանչյուր, տուփով)
- 3) Կարագ - արևելազն 200գ (սննդաբանի, տուփով)
- 4) Կարթ - մեկ լիտր (պատտերացված, արանց կուսերվանտների և հակաբիոտիկների, յուրաքանչյուրը 2.5 կամ 3.2%)
- 5) Պանիր «Լոռի» տեսակի - արևելազն 300գ
- 6) Բանան կամ կիթի - արևելազն 500գ
- 7) Նարինջ - արևելազն 500գ (կամ համարժեք չոր միդղ):

3/7.2

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր ՏԲ հիվանդներին տրամադրվող սննդային փաթեթերի քանակի նորստանումը, ֆակսված է նշված ժամանակահատվածում այդ վարչերում՝ բուժօժիտ հիվանդների թվի հետքավոր տասանումսից:

Սոցիալական աջակցության ենթակա ՏԲ հիվանդների անվանացանկերը մատակարար կազմակերպությանը կտրամադրվեն համապատասխան կազմակերպությունների ղեկավարության կողմից:

Բյուջեն՝ 4 032 000 ՀՀ դրամ

4. Գուման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթերի բաշխում /ամբուլատոր բուժման փուլում/

Սոցիալական աջակցություն կտրամադրվի բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (75% DOT) ամբուլատոր պայմաններում բուժվող ԴՎՏԲ հիվանդներին ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2014թ հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, ամիսը մեկ անգամ:

Ամբուլատոր պայմաններում բուժվող բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (առնվազն 75% ԴՈԹ) ԴՎՏԲ հիվանդները յուրաքանչյուր ամիս կստանան 2 սննդային փաթեթ և 1 հիգիենիկ փաթեթ (տվյալ ծառայության համար չափման միավոր է հանդիսանում հիվանդ/փաթեթը, որի 1 միավորը ներառում է վերը նկարագրված սխեմայով հիվանդին մեկ ամսվա ընթացքում տրվող մեկ անգամ հիգիենիկ և երկու անգամ տրվող սննդային փաթեթերը):

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեգորացված, պարունակում է վիտամին E)
- 2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)

3/2.2

3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)

4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)

5) Բրինձ - 0.5կգ (սալիտայ, երկարահատիկ)

6) Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)

7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)

8) Պահածոյացված միս - 400գ

9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1) Անտևերեն լվալու հեղուկ - 500գ

2) Օձառ - 4 հատ (ձեռքի)

3) Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)

4) Մաքրող փոշի - 500գ (ջուր պարունակող)

5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)

6) Ատամի մածուկ - 50 մլ

7) Խոզանակ ատամի - 1հատ

Բյուջեն՝ 26 400 000 ՀՀ դրամ

ՏԲ հիվանդների առցիալական աջակցության բաշխման համար նախատեսված բյուջեն, վառելիքի ծախսը ներառյալ, կազմում է 2 175 000 ՀՀ դրամ:

5. Դեղակայուն ՏԲ հիվանդներին դեղերի վատակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյուրերի տրամադրում

ԴՎՏԲ հիվանդները (տուբերկուլոզային կաքինեռներում կամ տանը)

3/2.2

դեղորայքի ընդունման յուրաքանչյուր օրվա համար հաջորդ 26 օր, ծրագրի իրականացման ողջ ընթացքում, 2015թ հունվարի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, կատանան բնական հյուսք դեղորայքի տարբերակ ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Մեկ հիվանդին օրական տրամադրվում է 400սկ բնական հյուսք՝ տեղական արտադրության: Հիվանդներին տրամադրվող հյուսքի քանակը հաշվարկելիս հաշվի կառնվի նաև հիվանդի արձակաժնի 75%՝ ՂՈԹ-ի ապահովումը:

Բյուջեն՝ 5 709 600 ՀՀ դրամ

6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ՂՈԹ բազմակարգության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

ՂԿՏԲ հիվանդները ամեն օր (շաբաթական 6 օր, ամիսը 26 օր) դեղորայքը կընդունեն բուժաշխատողների (բուժքույրերի) անմիջական վերահսկողության տակ (ՂՈԹ) պոլիկլինիկաներում՝ կամ տանը:

Հիվանդները, որոնք կայցելեն ՏԲ կենտրոններ և կընդունեն դեղորայքը բուժաշխատողների ուղղակի վերահսկողության տակ ծրագրի իրականացման ողջ ընթացքում կատանան իրենց ճանապարհածախսին (միջմարզային կամ միջքաղաքային՝ հասարակական տրանսպորտի կիրառմամբ) համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը՝ 400 դրամ: Այն դեպքում, երբ հիվանդը առողջական վիճակից ելելով, ֆիզիկապես ի վիճակի չէ այցելել ՂՈԹ կենտրոն, նրան կայցելի ՏԲ կաբինետի բուժքույրը՝ ՂՈԹ իրականացնելու նպատակով: Մասակարար կազմակերպության կողմից վերոնշյալ չափով կփոխհատուցվի նաև բուժքրոջ ճանապարհածախսը: Հիվանդների դրոշ մասը կարող են փոխհատուցվել օրական 2 անգամ՝ կախված հավելյալ ՂՈԹ ընդունման անհրաժեշտությունից: Մասակարար կազմակերպության ՏԲ կաբինետի բժշկի հետ համատեղ որոշում են ճանապարհածախսի փոխհատուցման ենթակա բուժքույրերի և հիվանդների ցուցակները:

Բյուջեն՝ 6 770 400 ՀՀ դրամ

6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեզուլյար ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ՂՈԹ բազմակարգության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

Հիվանդները, որոնք կայցելեն ՏԲ կենտրոններ և կընդունեն դեղորայքը բուժաշխատողների ուղղակի վերահսկողության տակ ծրագրի իրականացման ողջ ընթացքում կատանան իրենց ճանապարհածախսին (միջմարզային կամ միջքաղաքային՝ հասարակական տրանսպորտի կիրառմամբ) համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը՝ 400 դրամ շաբաթական 6 օր, ամիսը 26 օր: Այն դեպքում, երբ հիվանդը առողջական վիճակից ելելով, ֆիզիկապես ի վիճակի չէ այցելել ՂՈԹ կենտրոն, նրան կայցելի ՏԲ կաբինետի բուժքույրը՝ ՂՈԹ իրականացնելու նպատակով: Մասակարար կազմակերպության կողմից վերոնշյալ չափով կփոխհատուցվի նաև բուժքրոջ ճանապարհածախսը: Հիվանդների դրոշ մասը կարող են փոխհատուցվել օրական 2 անգամ՝ կախված հավելյալ ՂՈԹ ընդունման անհրաժեշտությունից:

Մասակարար կազմակերպության պատասխանատուն ՏԲ կաբինետի բժշկի հետ համատեղ որոշում են ճանապարհածախսի փոխհատուցման ենթակա բուժքույրերի և հիվանդների ցուցակները:

Բյուջեն՝ 9 828 000 ՀՀ դրամ

7. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ձմռան 3.5 ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում

Ամբուլատոր բուժման փուլում գտնվող ՂԿ ՏԲ հիվանդների 50%-ը կատանան ջեռուցման ծախսերի փոխհատուցում՝ ձմռանյին ամիսների համար, ամսական 15.000 դրամի չափով 2014թ նոյեմբեր (կես ամիս), դեկտեմբեր, 2015թ հունվար, փետրվար ամիսների (ընդհանուր արժույթ 3.5 ամիս) մեջ ընկած ժամանակահատվածի համար: Փոխհատուցման ենթակա հիվանդների ցանկը որոշվում է մասակարար կազմակերպության

պատասխանատուի և աղիակային աշխատողների հետ խոստովելով տվյալ SF կարիքների սպասարկման տարածքում առկա զԿ-SF հիվանդների աղիակային վիճակի գնահատման հիման վրա: Փոխադրացման ենթակա հիվանդների ցանկերը կհամաձայնեցվեն կան "Տուբերկուլոզի ազգային կենտրոնի" հետ: Ընդգրկվելու են նաև բուժումը ձախողած հիվանդները:

Բյուջեն՝ 3 300 000 ՀՀ դրամ

8. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար SF հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում

Բուժման լավ հետևողականություն ցուցաբերած ռեգուլյար SF հիվանդները բուժման ընթացքում ծրագրի իրականացման ընթացքում, 2014թ հոկտեմբերի 1-ից մինչև 2015թ հունիսի 30-ը, յուրաքանչյուր ամիս կստանան մեկական սննդային և մեկական հիգիենիկ փաթեթ, յուրաքանչյուր ամիս միջին հաշվով 600 հիվանդ (տվյալ ծառայության համար չափման սխալներ է հանդիսանում հիվանդ-փաթեթը, որն իր մեջ ներառում է մեկ հիվանդին տրված մեկ սննդային և մեկ հիգիենիկ փաթեթը):

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեգորտացված, պարունակում է վիտամին E)
- 2) Մսկարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի այլուրից պատրաստված)
- 3) խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
- 4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
- 5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
- 6) Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
- 7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)

3/7.2

- 8) Պահածոյացված միս - 400գ
- 9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
- 2) Օճառ - 4 հատ (ձեռքի)
- 3) Շամպուն - 400կ (նորմալ մազերի)
- 4) Մաքրող փռշի - 500գ (քյուր պարունակող)
- 5) Լվացքի փռշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
- 6) Ատամի մածուկ - 50 սլ
- 7) Խոզանակ ստամբ - 1հատ

Բյուջեն՝ 39 000 000 ՀՀ դրամ

9. Ռեգուլյար SF հիվանդների աղիակային աջակցության բաշխման համար նախատեսված բյուջեն, վառելիքի ծախսը ներառյալ, կազմում է՝ 6 525 000 ՀՀ դրամ:

10. Կազմակերպչական և պահպանման ծախսեր 22 900 326 ՀՀ դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտավոր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի, կոմունալ և այլ ծախսեր:

1. Ռեգուլյար SF հիվանդի մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեգորտացված, պարունակում է վիտամին E)
- 2) Մսկարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի այլուրից պատրաստված)
- 3) խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)

3/7.2

10. Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

- 4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
- 5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
- 6) Ուսկ - 0.5կգ (փաթեթավորված)
- 7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
- 8) Պահածոյացված միս - 400գ
- 9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

1 փաթեթի արժեքն է՝ 9 000 ՀՀ դրամ

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 27 000 000 ՀՀ դրամ:

2. Ռեզուլյար ՏԲ հիվանդի մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
- 2) Օճառ - 4 հատ (ձեռքի)
- 3) Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)
- 4) Մաքրող փոշի - 500գ (քլոր պարունակող)
- 5) Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
- 6) Առամի մածուկ - 50 մլ
- 7) Խոզանակ ատամի - 1հատ

1 փաթեթի արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 12 000 000 ՀՀ դրամ:

3. Քրեակատարողական հիմնարկներում գտնվող ՏԲ հիվանդներին տրամադրվող 1 փաթեթի պարունակությունը հետևյալն է՝ 3/7.2

- 1) Պահածոյացված միս - առնվազն 400գ
- 2) Թթվաերկ-կաթնաշառ - առնվազն 300գ (10 % յուղայնության, տուփով)
- 3) Կարագ - առնվազն 200գ (սերուցքային, տուփով)

- 4) Կաթ - մեկ լիտր (պաստերացված, ամաց կոնսերվանտների և հակաֆոսֆորիկների, յուղայնությունը՝ 2.5 կամ 3.2%)
- 5) Պանիր Լոռի - առնվազն 300գ
- 6) Բանան կամ կիվի - առնվազն 500գ
- 7) Նարինջ - առնվազն 500գ (կամ համարժեք չոր միրգ):

1 փաթեթի արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 4 032 000 ՀՀ դրամ:

4. ԴԿ ՏԲ հիվանդի մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

- 1) Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզորոբացված, պարունակում է վիտամին E)
- 2) Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
- 3) Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնություն)
- 4) Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
- 5) Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
- 6) Ուսկ - 0.5կգ (փաթեթավորված)
- 7) Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
- 8) Պահածոյացված միս - 400գ
- 9) Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

1 փաթեթի արժեքն է՝ 9 000 ՀՀ դրամ

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 21 600 000 ՀՀ դրամ:

5. ԴԿ ՏԲ հիվանդի մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝ 3/7.2

- 1) Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ

	2) Օձառ - 4 հատ (ձեռքի) 3) Շամկուն - 400սլ (տրորակ մագլերի) 4) Մաքրող փռշի - 500գ (քլոր պարունակող) 5) Լվացքի փռշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար) 6) Առամի մածուկ - 50 սլ 7) Խոզանակ ատամի - 1հատ 1 փաթեթի արժեքն է՝ 4 000ՀՀ դրամ Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 4 800 000 ՀՀ դրամ 6. Մեկ հիվանդին մեկ օրվա համար նախատեսվում է տրամադրել՝ - Հյուսիս քնական 200սլ X 2= 400 սլ 1 միավորի արժեքն է 122, 00 ՀՀ դրամ: Ընդհանուր հեղուկների արժեքն է՝ 5 709 600 ՀՀ դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը Կազմակերպչական և պահպանման ծախսեր 22 900 326 ՀՀ դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտավոր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի, կոմունալ և այլ ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների Առողջապահության նախարարություն, Տուրքերկուրգի Ազգային Կենտրոն, <<Բժշկներ առանց սահմանի>> կազմակերպություն:
13.	Ծրագրի արդյունավետության մեխանիզմների նկարագրությունը վերահսկողության մեխանիզմների Նախատեսվում է տրամադրել ամսեկան, ավարտական հաշվետվություններ պատվիրատուին՝ Առողջապահության նախարարությանը: Կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր պատվիրատուի, ինչպես նաև Գլխավոր Հիմնարանի տեղային գործակալի կողմից: Նախատեսվում է հաշվետվություն ներկայացնել նաև ՀՀ



0010, Երևան, Մեփե-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱԿՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

3/2.2

02.03.2015թ. № 07/ՑՃ-2/4441-1

Ձեր № _____

<< Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.02.2015թ. N 15/15.8/2488-15 գրության՝ կապված << Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի 11-րդ կետում ներկայացված կազմակերպական ծախսերն (22,900,326.00 դրամ) ամբողջությամբ արտացոլել նաև ծրագրի 9-րդ կետում:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ. 011 910-549

034/6026-15
02.03.2015թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/4140-15 3/2.2
25.02.2015

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.02.2015թ. թիվ 15/15.8/2488-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N Մ-1026-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	
Որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի 11-րդ կետում ներկայացված կազմակերպական ծախսերն (22,900,326.00 դրամ) ամբողջությամբ արտացոլել նաև ծրագրի 9-րդ կետում:	Առաջարկությունը հաշվի է առնվել:

3/2.2

034/5663-15
25.02.2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
— մարտի 2015 թվականի N Մ-
քաղ. երևան

- Ա

3/7.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-503-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Տուբերկուլոզի դեմ պայքարի
ազգային կենտրոն» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի
2015 թվականի փետրվարի 9-ի N 35 գրությունը և Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 18-ի N 07/80-2/3367-15 ու
փետրվարի 20-ի N 06/3-3/3612-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության 2015 թվականի փետրվարի 12-ի N ԱՄ/22-2/1388-15 եզրակացությունները,
որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի դեմ պայքարի
ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-503-Ա
որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).
- 2) որոշման 1-ին կետում «191,829,574» թիվը փոխարինել «267,254,343» թվով.
- 3) Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Տնօրեն Լյուբովա Հարությունյան
«04» մարտի 2015 թ.

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԾՐԱՍԿԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈԼՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

1.	Ծրագրի նպատակը	Կրճատել տուբերկուլոզի (ՏԲ) բերել Հայաստանի Հանրապետությունում՝ բարձրացնելով ՏԲ ախտորոշման, դրավալ բուժման ծառայությունների մատչելիությունը, և բնակչության անվտանգ հավատարմությունը բուժօգնություն ստանալով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	ՄԻԱԿ/ԶԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Կենտրոն, ԺՆԱ, Շվեյցարիա:
